

**ՀՀ 2014-2016թթ. ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ  
ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ  
ԵՐԿՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ**

*Աշոտ Թնիկյան\**

Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15.1 հոդվածի («Միջնաժամկետ ծախսերի կառուցվածքը և բովանդակությունը»), միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ) բաղկացած է երկու մասից՝ ա) կառավարության հարկաբյուջետային քաղաքականության շարադրանք և բ) կառավարության ծախսային քաղաքականության ռազմավարություն:

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից է, պետական բյուջեի նախագծի հիմքում դրված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Ինչպես կառավարությունն է նշում, առաջիկա տարիներին կշարունակվեն տնտեսական միջոցառումները շուկայի «Բացերի» մեղմման, եկամուտների և այլ ռեսուրսների վերաբաշխման ու *տնտեսության կայունացման* ուղղությամբ: ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում *բնակչության բարեկեցության աճն ու աղքատության հաղթահարումն է*: Խնդրի համակողմանի լուծման առումով ուրույն դեր ունի ՄԺԾԾ-ն:

---

\* Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն, տ.գ.թ.:

ՄԺԾՄ մշակման և իրագործման առաջին փորձերը ձեռնարկվել են 2001– 2003 և 2002-2004թթ.: 2003-2005թթ. պետական ՄԺԾՄ մշակման գործընթացը տարբերվեց թե՛ կազմակերպչական, թե՛ բովանդակային առումներով. 2003-2005թթ. պետական ՄԺԾՄ-ը հիմնականում կենտրոնացել էր տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող բնագավառների վրա:

Բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրման հստակ առանձնացումն ընդգծում է փաստաթղթի քաղաքական կարևորությունը, որը դառնալու է քննարկման առարկա ինչպես իշխանության գործադիր և օրենսդիր մարմիններում, այնպես էլ հասարակության լայն շրջանակներում:

Մեր ուսումնասիրման առարկան 2014–2016թթ. ՄԺԾՄ-ն է (*ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 4-ի N 740 որոշում*): Այդ ծրագրի հարկաբյուջետային քաղաքականության շարադրանքը ներկայացնում է «*ՀՀ կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները*»: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2014թ. պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

ՄԺԾՄ-ն կառավարվելու և իրագործվելու է ՀՀ կառավարության կողմից հիմնական ռազմավարական գերակայություններ սահմանված ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀ կառավարության Կայուն զարգացման ռազմավարական ծրագրի ( *ԿԶՌԾ*) շրջանակներում:

Այս վերջին երկու ծրագրերն առաջիկա տարիներին առավել կարևորում են *պետական բյուջեի ծախսային երեք գերակայությունները*.

1. սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

2. հանրապետության տարածքային ամբողջականության պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,
3. տնտեսության առանձին ոլորտներում ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

ՄԺԾԾ-ով նախատեսվում է, որ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվեն վերը նշված գերակայությունները՝ համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջի, արտաքին աղբյուրների ներգրավման միջոցով: Այսինքն՝ խնդիրների խնդիր է մնում պետական պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու նպատակը, ինչն էականորեն սահմանափակում է ՀՀ կառավարության հնարավորությունները:


ՄԺԾԾ կանխատեսումներն իրականացվում են *վեց հիմնական ասպեկտներով* (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

| Տնտեսության նկարագրում                          | Զափում                                                                |
|-------------------------------------------------|-----------------------------------------------------------------------|
| Համախառն առաջարկ                                | ՀՆԱ իրական աճ                                                         |
| Համախառն պահանջարկ                              | կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, գուտ արտահանում/ՀՆԱ |
| Գնային փոփոխականներ                             | ՀՆԱ դեֆլյատոր, գնաճ                                                   |
| Ֆինանսական համակարգի խորություն                 | փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ                         |
| Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ | ընթացիկ հաշվի հաշվեկշիռ                                               |
| Պետական հատվածի դիրքը տնտեսությունում           | պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ                           |

## Նկար 1

Տնտեսության ներկա իրավիճակն  
ըստ վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների



Այսպիսով, 2010-2012թթ. ՀՆԱ միջին աճը կազմեց շուրջ 4.7%, ընդ որում՝ 2010-2012թթ. աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության:


2012թ. ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.0%, արդյունաբերության հաշվին՝ 1.5%, իսկ գյուղատնտեսության հաշվին՝ 0.5%, շինարարությունը 0.4 տոկոսային կետով բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա:

**Կանխատեսում:** 2013թ. համար ծրագրված է 6.3% տնտեսական աճ, իսկ 2014-2016թթ. իրական ՀՆԱ տարեկան աճը կանխատեսվել է համապատասխանաբար՝ 6.3, 6.3 և 6.4%-ի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը:

Այստեղ հարկ է անդրադառնալ համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներին, քանի որ Հայաստանի տնտեսությունը և ձևավորվող սոցիալ-տնտեսական վիճակը կապված են դրա հետ: Կանխատեսվում է, որ համաշխարհային տնտեսությունը թե՛ 2013 և թե՛ 2014թթ. աճելու է համապատասխանաբար 103.3 և 104% տեմպերով: Զարգացած երկրներում աճի տեմպերը կկազմեն 2013-ին՝ 101.2%, իսկ զարգացող երկրներում շատ ավելի բարձր՝ 105.3%:

Նկար 2

ՀՆԱ իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի



ՄԺԾԾ-ում արտացոլված պետության հիմնական մակրոտնտեսական պարամետրերը կողմնորոշում են բյուջետային եկամուտների և ծախսերի ցուցանիշների կանխատեսումները, և դրան համապատասխան, *Նկար 2-ում* ներկայացված են ՄԺԾԾ ճյուղային կանխատեսումները:

ՀՀ 2014-2016թթ. ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից առանձնացվել են այն գործոնները, որոնք կարող են ազդել հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի վրա: Այդ գործոնների կազմում առավել կարևորվում են նրանք, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելու անհրաժեշտությանը: Այդ իմաստով ՀՀ 2014-2016թթ. ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Այդ տեսակետից, ըստ մեզ, բյուջետային գործընթացը կշահեր, եթե նրա մշակման և իրագործման ընթացքում ընդունված լինեին *բյուջետային կանոնները*, որոնց նպատակն է խուսափել ապագա ճգնաժամերից և ապահովել տնտեսական զարգացումը, հանել երկիրն առկա պարտքային ճգնաժամից, այսինքն՝ ձևավորել պետական բյուջեի պլանավորման խիստ կանոններ: Միաժամանակ, բյուջետային կանոնների կիրառումը թույլ կտա 2014–2016թթ. նվազեցնել պետական բյուջեի արտաքին տնտեսական կախվածությունը, բարձրացնել նրա կայունությունը և հավասարակշռել բյուջետային համակարգը:

Մենք նաև կարևորում ենք *սցենարային մոտեցման կիրառումը* ՄԺԾԾ մշակման ժամանակ: Նման մոտեցումը Հայաստանի պետական բյուջեի պլանավորման ընթացքում դրական ազդեցություն կունենա ռիսկերի նվազման տեսակետից, քանի որ, մեր դիտարկմամբ, բավական անորոշ, ռիսկային խնդիրներ են առկա մեր տնտեսության զարգացման գործում:

### **ՀՀ 2014–2016թթ. պետական բյուջեների եկամուտների քաղաքականություն և կանխատեսում**

Բյուջետային քաղաքականության առավել կարևոր ուղղությունն են ներքին ռեսուրսների օգտագործման վրա հիմնված հարկաբյուջետային քաղաքականության վարումը և դրամավարկային քաղաքականության հետ արդյունավետ կոորդինացման միջոցով՝ թիրախային արդյունքների ապահովումը:

ՀՀ 2014–2016թթ. պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 1,146.3, 1,266.8 և 1,416.4 մլրդ դրամի չափով (*Աղյուսակ 2*): Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

*Աղյուսակ 2*

*2014–2016թթ. համար ծրագրված բյուջետային եկամուտները (մլրդ դրամ)*

| <b>Եկամտատեսակը</b>                          | <b>2014</b>    | <b>2015</b>    | <b>2016</b>    |
|----------------------------------------------|----------------|----------------|----------------|
| <b>Պետական բյուջեի եկամուտներ</b>            | <b>1,146.3</b> | <b>1,266.8</b> | <b>1,416.4</b> |
| <i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i> | <i>23.63</i>   | <i>23.62</i>   | <i>23.87</i>   |
| <i>որից</i>                                  |                |                |                |
| <b>Հարկային եկամուտներ</b>                   | <b>1,103.3</b> | <b>1,236.0</b> | <b>1,387.5</b> |
| <i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i> | <i>22.75</i>   | <i>23.04</i>   | <i>23.38</i>   |
| <i>%-ով ընդհանուրի նկատմամբ</i>              | <i>96.25</i>   | <i>97.56</i>   | <i>97.96</i>   |
| <b>Այլ եկամուտներ</b>                        | <b>20.9</b>    | <b>19.6</b>    | <b>18.6</b>    |
| <i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i> | <i>0.43</i>    | <i>0.37</i>    | <i>0.31</i>    |
| <i>%-ով ընդհանուրի նկատմամբ</i>              | <i>1.82</i>    | <i>1.55</i>    | <i>1.31</i>    |
| <b>Պաշտոնական դրամաշնորհներ</b>              | <b>22.1</b>    | <b>11.2</b>    | <b>10.3</b>    |
| <i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i> | <i>0.46</i>    | <i>0.21</i>    | <i>0.17</i>    |
| <i>%-ով ընդհանուրի նկատմամբ</i>              | <i>1.93</i>    | <i>0.89</i>    | <i>0.73</i>    |

ՀՀ 2014–2016թթ. պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2013թ. մակարդակի համեմատ, 2014թ. անվանական ՀՆԱ-ի շուրջ 6.9% աճի պայմաններում, ՀՀ 2014թ. պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրվում է շուրջ 9.1%

կամ 105.2 մլրդ դրամ ավելացումով (*հիմնականում հարկային եկամուտների հավելածի հաշվին*): Միաժամանակ, 2014թ. մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 9.2% աճ է կանխատեսվում 2015թ. (*անվանական ՀՆԱ 10.6% կանխատեսվող աճի պայմաններում*) և 2015թ. մակարդակի համեմատ՝ 2016թ.՝ 11.7 %-ով (*անվանական ՀՆԱ 10.6% կանխատեսվող աճի պայմաններում*):

*Աղյուսակ 2-ում* ներկայացված ցանկացած մեկնաբանություն ցուցանիշների վերաբերյալ պետք է համակցել այն իրականության հետ, որը բնորոշ է Հայաստանի տնտեսությանը: Խոսքն այն մասին է, որ մեր տնտեսությունը բաղկացած է երկու խոշոր հատվածներից՝ ստվերային և ոչ ստվերային:

Ամբողջովին կարելի է ընդունել ՀՀ կառավարության դիրքորոշումը, որի հարկաբյուջետային քաղաքականության վարչարարական միջոցառումները միտված են առաջիկա տարիներին հարկային և մաքսային համակարգերի կատարելագործմանը: Մասնավորապես, նախատեսվում է հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության տարեցտարի ավելացման շարունակումը՝ հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ հատվածի կրճատման միջոցով: Դրա շնորհիվ համախառն ներքին արդյունքի նկատմամբ հարկային եկամուտների մակարդակը կավելանա տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով: ՄԺԾԾ-ում ներկայացված միջոցառումների մյուս դրույթներն առավելապես կրում են դեկլարատիվ և, հետևաբար, անցողիկ բնույթ: Կարելի է ավստոսալ նման մոտեցման համար:

Եկամտային մուտքերի ցուցանիշների շարքում կուզենայինք ուշադրություն դարձնել «Այլ եկամուտներ»-ի վրա: Սա այն հոդվածն է, որը ցույց է տալիս պետության և նրա մարմինների դերը պետական բյուջեի եկամուտների ձևավորման գործում: Համեմատության կարգով նշենք, որ, օրինակ, Գերմանիայում հարկային մուտքերը կազմում են բյուջեի եկամուտների 4/5 մասը: Նման օրինակներ կա-

րելի է բերել եվրոպական մյուս պետությունների համար: Հայաստանում այդ հոդվածի տոկոսային կշիռը աստիճանաբար նվազում է և հասցվում 2016թ. 1.31%-ի:

*Որքանո՞վ է շահեկան նման քաղաքականության շարունակական իրականացումը, երբ պետության դերը տնտեսությունում ձգտում է զրոյի: Արդյո՞ք Հայաստանի տնտեսական և ֆինանսական ինստիտուտներն այնքան արդյունավետ են, որպեսզի ապահովեն անհրաժեշտ բյուջետային եկամուտները: Պետք է, վերջապես, հրաժեշտ տալ տխրահռչակ պետական տնտեսական և դրամավարկային քաղաքականությանը՝ հիմնված «Washington Consensus»-ի վրա:*

Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը, ըստ կանխատեսումների, 2013-2016թթ. կազմելու է համապատասխանաբար՝ 22.44, 22.75, 23.04 և 23.38 տոկոսային կետ: Նման բյուջետային քաղաքականությամբ մենք առաջիկա 20 տարում կհասնենք հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշին, որն իրատեսական է ռեալ զարգացող պետությունների համար: Չնայած հնչած քննադատությանը՝ մենք գտնում ենք, որ հարկերի գծով 2013թ. և հաջորդ կանխատեսվող տարիների համար հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակն իրատեսական է:

Ըստ ՄԺԾԾ կանխատեսումների, 2013-2016թթ. հարկային սահունության գործակիցը (*ՀՆԱ աճի յուրաքանչյուր տոկոսային կետին հարկերի տոկոսային կետով ավելացում*) կգերազանցի 1-ը, ինչը ենթադրում է հարկային և մաքսային մարմինների կողմից վարչարարական միջոցառումների իրականացման անհրաժեշտություն՝ հարկային եկամուտների ծրագրային մակարդակն ապահովելու ուղղությամբ: Սա թույլ է տալիս ՀՀ կառավարությանը եզրահանգել, որ դիտարկվող տարիների հարկային եկամուտների գծով ծրագրված ցուցանիշները կատարման առումով պարունակում են որոշակի ռիսկ: Հարկային սահունությունը 2013-2016թթ. կկազմի համապա-

տասխանաբար՝ 1.21, 1.16, 1.14 և 1.15: Նշված ռիսկը տրամաբանորեն հետևում է նրանից, որ հարկային սահունության ցուցանիշի մեծությունը կապված է հարկային վարչարարության, այլ ոչ թե համակարգի մակրոտնտեսական փոփոխություններին, առաջին հերթին՝ գործարար ցիկլի փուլի փոփոխությանն աղեկվատ արձագանքելու կարողության հետ:

### **Պետական բյուջեի դեֆիցիտը**

Պետական բյուջեի ձևավորումը սովորաբար, ինչպես նախորդ, այնպես էլ առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվող միջոցների գերակշիռ մասը կազմելու են փոխառու միջոցները (Աղյուսակ 3).

Աղյուսակ 3

ՀՀ 2013-2016թթ. պետական բյուջեների դեֆիցիտի  
ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

| Ցուցանիշներ                              | 2013             | 2014             | 2015             | 2016             |
|------------------------------------------|------------------|------------------|------------------|------------------|
|                                          | Հաստատված        | Ծրագիր           |                  |                  |
| <b>Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ</b> | <b>119,789.2</b> | <b>111,554.2</b> | <b>107,280.6</b> | <b>118,697.0</b> |
| <i>այդ թվում՝</i>                        |                  |                  |                  |                  |
| Ներքին աղբյուրներ                        | 55,216.3         | 93,800.0         | 76,883.0         | 75,722.7         |
| Արտաքին աղբյուրներ                       | 64,572.9         | 17,754.2         | 30,397.6         | 42,974.3         |

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2013թ. համար ծրագրված 2.64%-ի դիմաց 2014-2016թթ.

աստիճանաբար կնվազի՝ 2.64, 2.3 և 2.0%: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշիռը դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր ծավալում 2014-2016թթ. կտատանվի 84.1%-ից 63.8%-ի միջակայքում՝ 2013թ. ծրագրային 46.1%-ի դիմաց:


ՄԾԾԾ այն մասում, որը վերաբերում է պետական բյուջեի դեֆիցիտին, ՀՀ կառավարությունը լուրջ մտորումների տեղիք է տալիս, երբ դիտարկում է պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկերը: Խոսքը վերաբերում է այն դրույթին, որտեղ նշվում է մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծության 50% սահմանաչափի գերազանցման հնարավոր տարբերակը: Այս պարագայում ինչ-որ արտակարգ, հատուկ գործողություններ ՀՀ կառավարությունը չի ենթադրում:

### **2014-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կանխատեսվող ռեսուրսները և ծախսերը**

ՀՀ 2014-2016թթ. պետական բյուջեների ծախսերի կանխատեսումներն ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված գծագրերով.


*Նկար 3*

*2014-2016թթ. պետական բյուջեների ծախսերը (մլն դրամ)*




Նկար 4

2014-2016թթ. պետական բյուջեների ծախսերն ըստ ոլորտների (մլն դրամ)



Նկար 5

ՀՀ 2013-2016թթ. պետական բյուջեների ծախսերն ըստ ոլորտների (տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%))



■ 2016թ. ծրագիր  
 ■ 2015թ. ծրագիր  
 ■ 2014թ. ծրագիր  
 ■ 2013թ. հաստատված պետական բյուջե

*Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության* խմբում 2014-2016թթ. կարևորվում են՝ *կրթության ոլորտում* համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները, որոնք դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական, *առողջապահության բնագավառում*՝ բյուջետային միջոցները կնպատակաուղղվեն առաջնային բուժօգնության ամրապնդման և զարգացման ծրագրերին:

*Սոցիալական պաշտպանության* բնագավառում 2014թ. նախատեսվում է ներդնել «Կենսաթոշակային ապահովություն (*պարտադիր կուտակային համակարգ*)» ծրագիրը, որի ծախսը կազմում է երեք տարում 80.28 մլրդ դրամ: Սույն ծրագիրն ապահովելու է կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը:

Սոցիալական պաշտպանության բնագավառում ուրույն տեղ է զբաղեցնում 2012թ. ներդրված պետական հիմնարկներում աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման սոցիալական փաթեթը:

*Տնտեսության ճյուղեր.* 2014-2016թթ. ծախսերը նպատակաուղղված են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին: Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը, որոնց զգալի մասը նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աջակցությամբ:

*Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր.* Ծախսերի աճը պայմանավորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների

պատրաստականության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:


*Պետական կառավարման* բնագավառում ծախսերը, 2013թ. համեմատ, 2014-2016թթ. կունենան որոշակի աճ՝ պայմանավորված համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացման անհրաժեշտությամբ:

*Այլ ոլորտներ* խմբի համար 2014-2016թթ. նախատեսվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի պետական պարտքի սպասարկմանը:

Ծախսային հոդվածներից նպատակահարմար է առանձնացնել երկու ուղղություն՝ գիտությանն ուղղվող և աշխատավարձերի փոփոխության հետ կապված ծախսերը:


*Գիտություն.* ըստ ՄԺԾԾ-ի՝ ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտին 2014-2016թթ. նախատեսվում է հատկացնել, համապատասխանաբար՝ 12,662.8 մլն դրամ, 13,994.1 մլն դրամ և 15,646.5 մլն դրամ, ինչը գերազանցում է նախորդ տարիների ֆինանսավորման մակարդակը համապատասխանաբար՝ 10.75, 10.51 և 11.8 տոկոսային կետով: *Նկար 6*-ում ներկայացված են գիտության ոլորտին պետական բյուջեով հատկացված և կանխատեսվող ծախսերը (*մլն դրամ*).

*Նկար 6*



Իհարկե, ֆինանսավորման հարցում աճ նկատվում է, սակայն եթե գնահատենք նրանց հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ, ապա կստանանք գիտության ֆինանսավորման (*տոկա և կանխատեսվող*) վերաբերյալ այլ պատկեր (*տոկոսային կետ*) (Նկար 7).

Նկար 7



Մենք առիթ ունեցել ենք անդրադառնալու գիտությանը ՀՀ պետական բյուջեից ուղղվող ծախսերին<sup>1</sup>:

Համեմատության կարգով ներկայացնենք *Աղյուսակ 4-ը*, որտեղ արտացոլված են մի շարք զարգացած պետությունների օրինակով գիտությանն ուղղվող ծախսերի մեծությունը և դրանց տոկոսային կշիռը ՀՆԱ-ում:

Իհարկե, կարելի է տարբեր եղանակներով և ձևերով հիմնավորել ստեղծված իրավիճակը ՀՀ գիտության ֆինանսավորման մակարդակի հարցում: Մի բան ակնհայտ է, որ նման ֆինանսավորումն ակնհայտորեն արտացոլում է պետական մարմինների վերաբերմունքը հայ գիտնականների նկատմամբ: Համապատասխանաբար ձևավորվում է հայ գիտնականի սոցիալական դիրքը հանրությունում և հասարակությունում:

<sup>1</sup> ՀՀ բյուջեից գիտությանն ուղղված ծախսերը, «21-րդ դար», թիվ 5 (45), 2012թ.:

Աղյուսակ 4

|           | Ընդամենը,<br>մլն. \$ | % ՀՆԱ |              | Ընդամենը,<br>մլն. \$ | % ՀՆԱ |
|-----------|----------------------|-------|--------------|----------------------|-------|
| Իսրայել   | 9589,2               | 4,40  | Սլովենիա     | 1162 0               | 2,11  |
| Ֆինլանդիա | 7588,7               | 3,88  | Բելգիա       | 8154,2               | 1,99  |
| Կորեա     | 53184,9              | 3,74  | Նիդերլանդներ | 12968,7              | 1,85  |
| Շվեդիա    | 12535 5              | 3,40  | Կանադա       | 24066,9              | 1,81  |
| Ճապոնիա   | 140832,8             | 3,26  | Իռլանդիա     | 3197,6               | 1,77  |
| Դանիա     | 6816,0               | 3,06  | Չինաստան     | 178980,7             | 1,77  |
| Շվեյցարիա | 10525,2              | 2,99  | Մեծ Բրիտանիա | 39137,8              | 1,76  |
| ԱՄՆ       | 401576,0             | 2,90  | Նորվեգիա     | 4741,6               | 1,69  |
| Գերմանիա  | 86299,4              | 2,82  | Պորտուգալիա  | 4304,6               | 1,59  |
| Ավստրիա   | 9254,2               | 2,76  | Իսպանիա      | 20386,1              | 1,39  |
| Ֆրանսիա   | 49990,8              | 2,25  | Իտալիա       | 24269,2              | 1,26  |
| Ավստրալիա | 19028,9              | 2,24  | Թուսաստան    | 33725,2              | 1,12  |

### ***Պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը***

ՄԺԾԾ-ով նախատեսվում է 143 մլրդ դրամի եկամուտների ավելացում 2014 թվականից, որն ուղղվելու է նախ՝ թոշակների 20% բարձրացմանը (37.7 մլրդ դրամ): Երկրորդ՝ 61 մլրդ դրամ ուղղվելու է աշխատավարձերի բարձրացմանը: Երրորդ՝ կուտակային թոշակներին հատկացվելու է մոտ 20 մլրդ դրամ, քանի որ եկող տարվանից սկսելու է գործել նոր՝ կենսաթոշակների կուտակային համակարգը: 2015-ին 448 հազար կենսաթոշակառուների միջին կենսաթոշակը կկազմի 43 հազար դրամ:

Քաղծառայողների աշխատավարձերը փաստացի արդեն 6-7 տարի չեն բարձրացվել: 2016-ին նրանց միջին աշխատավարձը կկազմի 413 հազար դրամ: Սակայն այս բարձրացումը հավասարաչափ չի լինելու, քանի որ եկող տարվանից նախատեսվում է պետական համակարգի աշխատավարձերի նոր սանդղակ, որտեղ կիրառվելու են գործակիցներ նվազագույն աշխատավարձի նկատմամբ: Նվազագույն աշխատավարձը 2014թ. կազմելու է 50 հազար դրամ:

Ավելանալու են ուսուցիչների աշխատավարձերը. 2016-ին այն կազմելու է 206 հազար դրամ՝ ներառելով հարկերը: Բուհերի դասախոսների միջին աշխատավարձը պետության կողմից ավելանալու է 34%-ով և կազմելու է մոտ 72 հազար դրամ ներկայիս 53 հազար դրամի փոխարեն: Սպասվում են փոփոխություններ նաև առողջապահության և մշակույթի ոլորտում:

2014-ից 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում պետության կողմից տրամադրվելու է 1 մլն դրամ նպաստ ներկայիս 430 հազար դրամի փոխարեն, իսկ 5-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում այդ նպաստը կազմելու 1.5 մլն դրամ:

Միաժամանակ, պարզ է, որ տնտեսական աճն ու ծախսերի ավելացումն ինքնին ռիսկեր են պարունակում, բայց նաև հասկանալի է, որ Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակն այլ-

*ընտրանք թույլ չի տալիս: Դա նաև պարտադիր պայման է ՀՀ մրցունակության բարձրացման տեսանկյունից:*

*Հոկտեմբեր, 2013թ.*

## **ПРОГНОЗЫ ГОСУДАРСТВЕННЫХ СРЕДНЕСРОЧНЫХ РАСХОДОВ РА НА 2014-2016 ГГ. С ТОЧКИ ЗРЕНИЯ ПОВЫШЕНИЯ ЕЕ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ**

*Ашот Теви́кян*

Резюме

Государственные среднесрочные расходы составляют важный компонент всего бюджетного процесса Республики Армения. В статье представлены методологические основания разработки среднесрочных расходов, прогнозные оценки формирования их доходной и расходной частей. Более подробно рассматриваются расходные показатели, которые будут направлены на финансирование науки и повышение заработной платы. Автор обращает внимание на необходимость усиления механизмов, призванных оказывать дисциплинирующее воздействие и обеспечивающих макроэкономическую стабильность, долгосрочную сбалансированность и устойчивость государственных финансов.